

**ԱՎ.ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱՔՈՒ-ԼԱՎԱ ՄԱՀԱՐԻ» ՊՈԵՄԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ**

Մ.Գ.ԶԱԲԱՐՅԱՆ

Ավ.Իսահակյանի «Աքու-Լավա Մահարի» պոեմը (1909 - 1910թթ.), որ մեծ ճանաչման ու փառքի արժանացրեց հեղինակին, նրա ստեղծագործական հանճարի ամենահզոր պոռթկումն է, համաշխարհային գրականության գլոբալործոցներից մեկը: Իսահակյանագիտությունը ժամանակի ընթացքում անդրադարձել է պոեմի քննությանը, ստեղծագործական աղբյուրներ որոնել գրողի նախորդ՝ 900-ական թվականների սկզբների բանաստեղծությունների հետ, ուսումնասիրել նրա կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկությունները, վեր հանել ուղղման գեղագիտության հետ ունեցած հոգեհարազատությունը՝ ճշտելով նրա տեղն ու դերը XIX - XX դարերի համաշխարհային պոեզիայի շարքում: «...Աքու-Լավա Մահարի» արևելյան պոեմ է, իր ներքին բովանդակությամբ փիլիսոփայական-սիմվոլիկ բնույթ ունի, իսկ իր արտահայտման ձևով գերազանցապես քնարական պոեմ-մենախոսություն է...»¹, - հավաստում է գրականագետ Էդ. Զրբաշյանը:

Պոեմի մասին առաջին ուշագրավ հոդվածագիրներից մեկը Ե.Ֆրանգյանն է, որի ուսումնասիրությունն այդպես էլ անավարտ է մնում: Հայ մտածողը, անդրադառնալով Իսահակյանի ստեղծագործական նկարագրի վրա գերմանացի նշանավոր իմաստասերներ Ա.Շոպենհաուերի և Ֆր. Նիցշեի ունեցած ազդեցությանը, վավերացնում է. «Աքու-Լավա Մահարի» մեջ... նրա գնահատման խոսքի ուժն ու թափը, նրա ոճի գեղեցկությունը հիշեցնում են Նիցշեի վերագնահատման խոսքը և աֆորիզմների ոճը, և նրա միտքը մյուս կողմից հիշեցնել է տալիս Շոպենհաուերի խորը և ցնցող պեսիմիստական միտքը»²:

Գրողի ստեղծագործությունների քննությանն անդրադառնալիս գրականագետ Պ.Մակինցյանը, Իսահակյանի պոեզիայի խիստ արժեքավոր և այժմեական նկատառումների հետ միաժամանակ, «Աքու-Լավա Մահարի» պոեմի գրական ազդեցությունների շուրջ խորհրդածություններում գրում է. «...բանաստեղծ Իսահակյանը ազդվել է բանաստեղծ Նիցշեից, բայց էապես Նիցշեի կուլտուրէթիքական ուսմունքը ոչ մի արտահայտություն չի գտել մեր լիրիկի երգերում»³: Այս տեսակետն էլ տասնամյակներ շարունակ իշխող է եղել Իսահակյանագիտության մեջ, իսկ անհատի «Ես»-ը՝ անհատականությունը, մերժող համայնակենտրոն հոգեբանությունը խորհրդային տարիներին արդեն ընդհանրապես նախադրյալներ չէր ստեղծում հեղինակի գրական-իմաստասիրական հայացքների ըստ ամենայնի քննության համար, քանի որ Նիցշե մտածողը խարանձավ էր «ոնակցիոն բուրժուական մտածող» պիտակով⁴:

¹ Էդ. Զրբաշյան, Զորս գագաթ, Ե., 1982, էջ 167 - 168:

² Գեղարվեստ, Թիֆլիս, 1911, հ. 4, էջ 143:

³ Գարուն, գիրք 3-րդ, Մ., 1912, էջ 345:

⁴ Նիցշե-Իսահակյան աղբյուրներն են անդրադարձել նաև՝ Ալ.Ռուբենի, Մուրճ, 1904, մարտ, Վ. Փափազյան, Պատմություն Հայոց գրականության, Կ.Պոլիս, 1910, Հ. Սոլովյ-

Պոեմի քնարական հերոսը արաբ բանաստեղծն է, որն իր ապրած տարիների իմաստը հանգեցրել է կյանքի էությունից մեկնությունը: Նրա ճանաչողության գործընթացը բազմապլան է և բազմաբնույթ. նախ՝ «Ապրեց փառքի և վայելքի մեջ», ապա՝

Եվ նրա խորաթափանց ոգին ճանաչեց մարդուն.

Ճանաչեց և խորագին ատեց մարդուն և նրա օրենքները :

Իսահակյանի պոեմում բազմաշերտ է ներկայանում նաև մարդ-օրենք տարբերակումը. մարդը՝ տարբեր որակներով՝ ընկեր, սիրած կին, բարեկամ, ծանոթ մարդիկ, իսկ օրենքներն այստեղ ոչ միայն պետական-իշխանական են, այլև մարդկային հոգևոր-բարոյական՝ պատիվ, հարգանք, բնկերություն՝ փառք-գանձ-հարստության հետ հարաբերություններում: Բարու և չարի, բարոյականի և անբարոյականի մարդկային էությունը ճանաչելուց հետո Աբուն հրաժարվում է մարդկության ստեղծած օրենքներից ու միջնորդավորված արժեքներից: Նրա ըմբոստ ու տառապող հոգին, պատրաստ՝ արդարության համար պայքարի, թողնում է մարդկանց և բռնում անապատի անդարձ ճանապարհը, մինչդեռ նրա կողմից լքված Բաղդադը շարունակում է ապրել նույն խարդավանքներով, արքունական դավերով, կախարդող, չքեղաշուք պերճանքով ու ճոխությունով:

Մեղկ փափկության մեջ Բաղդադն էր նիրհում ջեննաթի չքեղ, վառ երազներով... (11, 54):

Հեղինակը Աբուի միջոցով անարգանքի սյունին է գամում բոլոր այն սին ու կեղծ արժեքները, որոնք ստեղծվել են մարդկանց կողմից և, մերժելով մարդկային քաղաքակրթությունը, բռնում է անապատի ճանապարհը.

- Թողել ենք այնտեղ կի՞ն աստվածային, սե՞ր - երջանկություն, անհուն երազա՞նք. -

Քայլի՛ր, կանգ մի՛ առ. թողել ենք միայն շղթա ու կապանք, կեղծիք ու պատրանք (11, 57):

Իսահակյանի հերոսը ինքնագիտակցության յուրօրինակ ընթացք է ապրում՝ դատապարտելով սևփական պատկերացումները մարդկանց ու աշխարհի մասին: Ըմբոստ ու ցասկոտ մերժումներով հանդերձ, այնուամենայնիվ, կան սրբություններ, որոնց հերոսի խռովված հոգին հրաժեշտ չի տալիս՝ հոր և մոր գերեզմանները և, միջնադարյան արաբ բանաստեղծ ալ Մահարիի՝ նմանողությամբ («Ահավասիկ այն ոճիրը, որ Հայրս զործեց ինձի

յան, Քննադատական տեսություններ, Թիֆլիս, 1911, և ուրիշներ, խորհրդային տարիներին՝ Ա. Ասատրյան, Ավետիք Իսահակյանի կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1940, Գ. Հովհաննիսյան, Ավ. Իսահակյանի ստեղծագործական աշխարհը, Ե., 1969, Մ. Մկրյան, Իսահակյանի հումանիզմը, Ե., 1975, Էդ. Զրրաշյան, Ջորս գազաթ, Ե., 1982, Ա. Մուշեղյան, Ավ. Իսահակյան. Վաղ տարիներ, 1875 - 1898թթ., Ե., 1983 (վերջինս իր աշխատության մեջ բաղմաթիվ գուգահեռներ է նշում՝ ընդհանրապես չիցե-Իսահակյան ստեղծագործական աղբյուրներին անդրադառնալիս), Լ. Հախվերդյան, Վարպետը, Ե., 1990:

Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, վեց հատորով, Հ. 2, Ե., 1974, էջ 53: Այսուհետև այս հրատարակությունից (1973 - 1979) արվող մեջբերումների հատորը և էջերը կնշվեն բնագրին կից:

Արաբ գրողի անունը Աբու-Ալյա ալ Մահարի (972 - 1057) է, բառացի թարգմանություն՝ «Հայր բարձրագույն», ալ Մահարի՝ ծագումով Մահարի քաղաքից: Իսահակյանագիտությանը զբաղեցրել է նաև պոեմի գրական հերոսի և արաբ գրողի կենսագրությանն առնչվող հարցերի քննությունը: Հ. Ղանալանյանի Հավաստմամբ՝ արաբ բանաստեղծի մասին հեղինակը տեղեկացել է պոեմը գրելուց մեկ տարի առաջ՝ 1908թ., Ի. Շերի «Համաշխարհային

դեմ: Ինչ կը վերաբերի ինծի, ես գայն չգործեցի՝ որնէ անձի դեմ»⁷⁾, արձանագրում:

- Իմ հայրը իմ դեմ մեղանչեց, սակայն չմեղանչեցի ես ոչ ոքի դեմ⁸⁾ (II, 59):

Պոեմի անունն արդեն իսկ աղերսներ է հուշում արաբ մեծ բանաստեղծի հետ, որի առաջին՝ «Կրակե կայծեր» գրքի թեման անարդար կյանքի, համաշխարհային չարի պատճառած մորմոքի տրամադրությունն է: Իսկ ամենափայլուն «Լիլիգիլմէթ» ստեղծագործության մեջ արաբ իմաստասերն ու գրողը անդրադառնում է մարդկության կյանքի քննությանը, մերկացնում ընկերային և քաղաքական շահատակությունները, իայթող քննադատության ենթարկում տիրող հասարակական սարքն ու կարգը, ժամանակի բարոյական ապականված մթնոլորտը, մարդկային դաժան ու անողորմ արարքները, անարգանքի սյունին գամում իշխանավորներին ու ավատապետներին: Աշխարհի, կյանքի, մարդ արարածի հանդեպ արաբ բանաստեղծի հոռետեսական վերաբերմունքի վկայությունն է նրա հետևյալ արտահայտությունը. «...Ապուլ Ալա, կուրությունը քեզի թանկագին նվեր մը եղավ: Որովհետև եթե դուն տեսներ, քու բերբերդ մեկ մարդ չպիտի տեսներին»: Մոր մահը առավել սրեց կույր բանաստեղծի հարաբերությունները շրջապատի հետ՝ «...խորացուց իր հոռետեսությունը: Ատեց մարդիկը, ատեց իր միջավայրը... ինքզինքը կոչեց... կրկնակի ճգնաժամը...», նկատի ունենալով կուրությունը և մեկուսացումը մարդկանցից: Հայագրի մահարիագետի համոզմամբ՝ «...աշխարհն հրաժարվելով ինքզինք աքսորեց... իր ներաշխարհին մեջ, կծկվեցավ իր ծննդավայր Մաարրայի խուցը, կամավոր կերպով ինքզինք զրկեց աշխարհիկ հաճույքներե...»: Արաբագիտությունը գրողին համարում է «...չափազանց բարդ անհատականություն և ոչ պակաս բարդ հեղինակ»⁹⁾: Գրողի և Խաչակյանի քնարական հերոսի հոգևոր ներքին մերձեցումները ներկայանում են չար աշխարհի ու կյանքի դաժանության, ապականված հասարակության և անողորմ, վայրագ մարդ էակի նկարագրի շուրջ խորհրդածություններում լեզվաոճական ատաղձի հարազատությամբ:

Кричит младенцу чрево матери: “Умри от горя мы!

Мир этот страшный годен что для нерожденного!”¹³⁾

Разумные создания бессмертного творца

Идут путем страдания до смертельного конца (с. 51).

Повсюду власть свою распространило зло,

գրականության պատմությունը» և Մ.Աբելյանի «Արևելքի գլխավոր գրականությունները» գերմաներեն աշխատություններից (տե՛ս Օ.Տ.Դանալանյան, *Аветик Исаакян, Е.*, 1975, с. 62):

⁷⁾ Մ.Մուրադյան, Արաբական դասական գրականություն, Բեյրութ, 1973, էջ 117:

⁸⁾ Այս տողերը մակագրված են Խաչակյանի չիրմաքարին:

⁹⁾ Մ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 110:

¹⁰⁾ Նույն տեղում, էջ 116:

¹¹⁾ Արաբ գրականագիտությունը նշում է Ալ. Մահարիի ստեղծագործական ազդեցությունը Վերածնության նախակարապետ Դանթե Ալիգերիի «Աստվածային կատակերգություն» երկի վրա՝ նկատի ունենալով «Ռիսալէթիլ Դուֆրա» պոեմը:

¹²⁾ Ս. Վարժապետյան, Ապուլ Ալա էլ Մարրի, Պեյրութ, 1972, էջ 233:

¹³⁾ *Аб у-ль-Аля аль Маарри*, Избранное, М., 1990, с. 160 (այս գրքից արվող մյուս մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից):

Проникло в каждый дом, на горы взошло (с. 53).
 ...О злобный мир, обман коварный твой,
 Опутавший людей в пучине мировой (с. 73).
 У власти дьяволы, и каждая страна
 Владыке сатане служить обречена (с. 83).
 Когда тебе жену и впрямь избрать угодно,
 Останови, мой друг, свой выбор на бесплодной (с. 83).
 Копнешь поглубже – в каждом скрыт ворюга,
 И каждый хочет облапошить друга (с. 99).
 Чтобы наслаждаться сладко есть и пить,
 Они готовы ближнего сгубить (с. 102).

Ակնհայտ է բանաստեղծական տրամադրության, հույզի հարազատությանը հայ գրողի քնարական պոեմին, և թերևս, հարկ է եզրակացնել, որ այս առումով էլ պատահական չէ հերոսի ընտրությունը: Ի դեմս արաբ իմաստասերի ու ստեղծագործողի՝ Իսահակյանի հերոսը հաղորդակցվել է մի արարող-փրկիսոփայի հետ, որն արդեն հասու էր կյանքի էությունն ու իմաստին, և ինքն էլ նրա և իր հերոսի միջև մարդկային-հոգևոր նկարագրի ընդհանրություններ էր գտել: Թվում է նաև, որ պոեմի քնարական հերոսը ազգայինից դեպի համամարդկային արժեքների անցումով է արաբ: Ուստի հարկ է եզրակացնել, որ պատահական չէ պոեմի հերոսի ընտրությունը: Այլ Մահարիի այն իմաստասերն էր, որի մտածողությունը, ընկալած աշխարհը հոգեհարազատ էին հայ բանաստեղծին և մարմնավորում էին դարակազմիկ ժամանակների խաչմերուկներում փոփոխություններով պայմանավորված իրողություններ: «Աբու-Լալա Մահարիում» առկա է հայ-արաբ իմաստասիրական մտքի երկխոսությունը. չէ՞ որ ալ Մահարու ապրած տարիներին (972 - 1057), ի դեմս Բագրատունիների թագավորության (IX դ. 2-րդ կես - XI դ.), ազգային հոգևոր-մշակութային կյանքի փոքր «ոսկե դարն» էր (Գր. Նարեկացի, Տրդատ ճարտարապետ, Հովհ. Իմաստասեր, Ն. Շնորհալի, Գր. Մագիստրոս), և միջնադարյան Հայաստանում գործել են բարձր տիպի դպրոցներ, որոնցից մի քանիսը կոչվել են նաև համալսարաններ (Տաթև՝ IX - XV, Սանահին՝ X - XIII, Անի՝ XI - XIII), ուր այլ առարկաների թվում դասավանդվում էր նաև իմաստասիրություն:

Իսահակյանը իր՝ որպես Հեղինակի կրկնորդի և գրական նախատիպի հարցի շուրջ մտորումներում վավերացնում է. «Իմ գրվածքների մեջ ես իմ հոգին եմ նկարում», կամ էլ՝ «Աբու-Լալա Մահարի» պոեմի հերոսի մասին հավաստում. «...այնտեղ ես եմ, ուրիշ ոչ ոք, միայն ուրիշի վերարկուի տակ»¹⁴: Հեղինակի հանձնառությամբ՝ պոեմի ռուսերեն և գերմաներեն թարգմանությունների մասին գրախոսները պնդել են, «...որ միայն հայ մարդը կարող է այդքան սև հոռետես լինել» (VI, 217): Եվ հենց այս հանգամանքը նկատի ունենալով իսահակյանագետ Ա. Ինճիկյանը, երբ պոեմը համարում էր «...համաշխարհային թախծի վերաճած ազգային վշտի ամենախտացված արտահայտությունը...» (I, XII): Այս առումով ուշադրավ է Վարպետի խոստովանանքը. «Ես տիեզերական վիշտը զգացել եմ, հասկացել հայության մեծ վշտի միջոցով»¹⁵: «Աբու-Լալա Մահարի» պոեմի

¹⁴ Պատմա-բանասիրական հանդես, 1973, № 2, էջ 236:

¹⁵ Գաբրու, ամսագիր, Ե., 1975, № 10, էջ 10:

Հերոսը ըմբոստանում է այն Հասարակության դեմ, ուր ոտնահարվում են մարդու տարրական բարոյական իրավունքները: Անհատ-աշխարհակարգ ընդդիմությունը, պայմանավորված ազգային-քաղաքական արհավիրքներով, հնչում է նույն ցասումնայինց մոլեգնությամբ: Պոեմում, նիցչեյան աֆորիզմներով Հարուստ ոճավորմանը ներհյուսված, միաժամանակ ներկա են արաբական պոեզիային բնորոշ վառվռուն գույները, այդ բնության հենքի վրա արարված ոսկեվառ, արևավառ պատկերները: Ճանաչված արաբագետ Բ.Շիրոֆարը նշում է, որ մինչիսլամական պոեզիայում յուրահատուկ տեղ ու դեր ունի բնությունը «...չնչավորված բնությունը միշտ հերոսի ներքին ալեբախումների հարազատություն է գծագրվում...»: Բնությունն ասես երկրորդ հերոսն է՝ արաբական պոեզիայի բնորոշ խորհրդանիշներով՝ ավազախառն մրրիկ, ձի, անապատ, ուղտերի քարավան:

Արաբական գրականության մի այլ մասնագետի՝ Ի.Ֆիլչտինսկու Հավաստմամբ, ազգային պոեզիայում «...Համարյա միշտ կրկնվում է հերոսի գիշերային մենախոսության դրվագը՝ աստղազարդ երկնքի տակ. այս խորհրդածությունները բնության հզոր ուժերի առջև մարդու ոչնչության մասին են կամ կնոջ անհավատարմության, անցած երիտասարդության...»¹⁶:

Ավ. Իսահակյանը՝ Պ.Սևակի Համոցմամբ, «Հայ ամենակարգացած գրողը», XIX դ. վերջի և XX դ. առաջին կեսի այն երևելիներից է, որը Համաշխարհային գրականության փայլուն իմացության հետ ողջ խորքով ուսումնասիրել է և՛ հին Հունական ու արևելյան, և՛ հատկապես արևմտաեվրոպական իմաստասիրական միտքը: Գրողի ուշադրության կենտրոնում, պայմանավորված գերմանական կրթությամբ, հատկապես այդ փիլիսոփայական միտքն էր, և այս հանգամանքն էլ հիմք է տալիս պնդելու, որ նրա հետ ունեցած հոգևոր աղերսները կարևոր դեր են խաղացել Իսահակյան ստեղծագործողի կյանքում:

Պեսիմիզմը՝ որպես իմաստասիրական համակարգ, առաջին անգամ ի Հայտ է եկել բուդդիստական փիլիսոփայության մեջ: Մարդ արարածի կյանքը, թելադրված որոշակի պատճառներով, անվերջ տառապանք է ու տանջանք, և արևելյան այս իմաստասիրությունը դրանից ազատվելու միակ միջոցը հանգեցնում էր Ութնապատիկ ճանապարհին՝ Նիրվանային: XIX դ. պեսիմիզմը ընդունված է Համարել ֆրանսիական հեղափոխության պարտությունը հաջորդող տարիներին առաջադեմ մարդկության վհատության և հուսալքության արդյունք: Ա.Շոպենհաուերը «Աշխարհը որպես կամք և պատկերացում» աշխատության մեջ տանջանք ու մորմոք ծնող գործոններն արդեն առնչում է կամքին՝ վերջինիս օժտելով անդուլ ու անվերջ ձգտման հատկությամբ: Իմաստասերի աշխարհայացքի հիմքում Պլատոնի օբյեկտիվ իդեալիզմն է, բուդդայականությունը և Կանտի այնկողմնային (տրանսցենդենտալ) իդեալիզմը, համաձայն որի՝ «աշխարհը իմ պատկերացումն է»¹⁷:

Աշխարհը համարելով «վշտի ծով», «արցունքի հովիտ», իսկ մարդու կյանքը՝ մղձավանջ ու դժոխք՝ հոռետես փիլիսոփան գրում էր. «...այս աշ-

¹⁶ Б. Я. Шифар, Образная система арабской классической литературы (VI – XII вв.), М., 1974, с. 18.

¹⁷ И. М. Фильштинский, История арабской литературы V – X вв., М., 1985, с. 28.

¹⁸ А. Шопенгауэр, Мир как воля и представление, СПб., 1899, с. 415.

խարհը չէր կարող մի ողորմած էության ստեղծագործությունը լինել. այլ ավելի շուտ մի սատանայի»¹⁹: Վաղ տարիների իր գրառումներում բանաստեղծն անդրադառնում է Շուպենհաուերի իմաստասիրության քննությանը. «Ըստ Շուպենհաուերի, յուրաքանչյուր հաճույք բացասական բնույթ ունի. միայն տանջանքն է դրական... ցանկանալ կնշանակե տանջվել, իսկ ապրել կնշանակե ցանկանալ, ուրեմն՝ կյանքը ինքը տանջանք է»։ Այլ դեպքում իսահակյանը մտաբերում է. «Գերմանիայում առաջին գիրքը, որ ձեռք բերի՝ Շուպենհաուերի «Աշխարհը որպես կամք և պատկերացում» երկն էր»²⁰, այնուհետև խոստովանում է. «Պեսիմիզմն առաջ էլ կար իմ մեջ, բայց Նոպենհաուերը հունավորեց, թերեհաներ տվեց։ Ես ընդունում էի Նոպենհաուերի «Աշխարհը իմ պատկերացումն է» տեսությունը»²¹։ «Պեսիմիզմն առաջ էլ կար իմ մեջ» ասելով, թերևս, նա նկատի ուներ ժառանգածին գործոնը, որի մասին հպանցիկ ձևով անդրադառնում է «Ուստա Կարո» անավարտ վեպի էջերում։ Հարուստի մոր կերպարի մասին խոսելիս գրողը հավելում է. «Նրա մայրը ապլայիս»²² պես էր, վշտի մայր, առանց վշտի նա չէր կարող ապրել։ Վիշտ չունենար, պիտի ստեղծեր իրեն համար։ Ամեն բանից վիշտ էր հանում, վիշտ էր գտնում և տեսնում ամեն տեղ... ամեն բանի մեջ։ Ամեն մարդու վշտով տառապում էր, համաշխարհային վիշտ կար նրա հոգում, աշխարհը վշտով թաթախված էր նրա համար»²³։ Նոպենհաուերի կարծիքով, մարդ էակի կամքն ու բաղձանքը միշտ ներկայանում են քողարկված ձևով՝ դիմակով. նա իր էությունը վարագուրում է ստով, խաբեության մեջ՝ թելադրված ու պայմանավորված հասարակության մեջ առկա, գործող օրենքներով. «Ոչ ոք իրեն ցույց չի տալիս այնպես, ինչպես ինքը իրականում կա. յուրաքանչյուրը կրում է ինչ-որ դիմակ...»²⁴։ Շուպենհաուերը մտրակում էր մարդկային հոգու արատները՝ սուտն ու կեղծիքը, դիմակավոր մարդուն՝ մի դեպքում էլ եզրակացնելով. «...այս աշխարհը... բոլոր հնարավոր տարբերակներից վատթարագույնն է»²⁵։ Նրա համոզմամբ, մարդն է կյանքը վերածում դժոխքի, իսկ «աշխարհում տիրող չարի չափն ու սահման չի ճանաչում» մտայնությունը ողջ ցասկոտ մերկացումներով առկա է «Աբու-Լալա Մահարի» պոեմում.

Մարդիկ ի՞նչ են որ... դիմակված դևեր, ժանիքներ ու նին, սնտես
ծիրաններ... (II, 70):

...Մարդկային աշխարհ, արյան բաղանիք, ուր թույլն՝
Հանցավոր և հզորն՝ արդար,

Ուր մարդը տխրած՝ ինչ որ անում է՝ այս գարշ
աշխարհում՝ սոսկ նյութի համար։

...Թե ավելի վատ, ավելի զաղիր՝ քան մարդը դաժան -
այդ մարդն է նորեն (II, 71):

Իսահակյանի Հոռետեսությունը երկու դրսևորումներով է ներկայանում։ Հոռետեսական իմաստասիրությանը և այդ դպրոցին ծանոթ Հեղինակի

¹⁹ Նույն տեղում, էջ 413:

²⁰ ԳԱԹ, Իսահակյանի արխիվ, № 11 - II, էջ 45:

²¹ Ա. Ինճիկյան, Ավետիք Իսահակյան, Ե., 1977, էջ 228 - 229:

²² Բնաստեղծի մայրը՝ Ալմաստ Իսահակյան-Ղյուրյան, որի հանդիպ պաշտամունքի հասնող զգացմունքներ է տածել Իսահակյանը:

²³ ԳԱԹ, Իսահակյանի արխիվ, № 310 - 311 - II, էջ 45:

²⁴ А. Шопенгауэр նշվ. աշխ., էջ 1.

²⁵ Նույն տեղում, էջ 314:

ստեղծագործությունները հավաստում են, որ նրա ընկալումը նաև արևելյան բուդդայական հոռետեսությունն է և նրանից սերած արևմտաեվրոպականը՝ պահանջատիրական, սպառողական հոգեբանությունը (Ապրեց փառքի և վայելքի մեջ, Հզորների և մեծատունների հետ սեղան նստեց): Իսահակյան ստեղծագործողի մեծությունը այս միաձուլման մեջ է՝ և՛ բուդդիզմի, և՛ հնդկական փիլիսոփայության, և՛ արևմտաեվրոպական հոռետեսության: Բոլոր դեպքերում նշված իմաստասիրությունները կարևորում են մարդուն և նրա անձը: Իսկ երբ մարդը դժգոհ է կյանքից, նրա անբավարարվածությունն արդեն ներկայանում է այս խաչաձևում-միաձուլումով, որն առկա է «Աբու-Լալա Մահարի» պոեմում: Աստվածային և սատանայական արժեքների հակադրությունը Աբուի կերպարի իմաստասիրությունը է պայմանավորված. հերոսի «Ես»-ը ձգտում է բարուն, նպատակադրվում օգտակար լինել մարդկությանը, սակայն վերջինս չի գնահատում նրան: Եվ ազգակենտրոն հայը՝ Իսահակյանը, հերոս է ընտրում Արևելքից:

Մարդ արարածի կոչման, դերի, էություն շուրջ խորհրդածությունները, որ զբաղեցրել են Իսահակյանին²⁶ պոեմում, մարդկությանը հուզել է քաղաքակրթության արշալույսից և համակարգված ձևով ներկայանալ սկսել Ք.ա. V դարում: Հույն մեծ մտածող Սոկրատեսը, նպատակ ունենալով ճանաչել մարդ արարածի էությունը, առաջնորդվում էր Դելֆյան տաճարի մականգրությունը՝ «Ծանի՛ր զքեզ»՝ այն դարձնելով սեփական բարոյագիտական իմաստասիրության նշանաբանը: Քերթողահայր Խորենացին, ինքնորոշման համար որպես միջոց քաղաքականորեն իմաստավորելով նշված սկզբունքը, գտնում է, որ «ուրիշներին» և նրանց իրականացրած իշխանությունը հնարավոր է ճիշտ հասկանալ միայն սեփական «Ես»-ի իմացության միջոցով: Այսօրինակ խորհրդածություններում էլ մեծ մտածողը հայրենիք-պետություն ընկալումներում հայ ազգային մտածողության մեջ հասավ պետության ընկալման քաղաքական բացարձակ արժեքի մակարդակի՝ ստեղծելով գաղափարակիր «Ես»-ին:

Հույն ողբերգակ Սոֆոկլեսի համոզմամբ, այս մոլե՛ ու մռայլ աշխարհում կյանքը գորշ է և անհրապույր, և չգոյությունը՝ գերադասելի գոյությունից: «Մարդը մեղքի անոթ»՝ աստվածաշնչյան մտայնությունը մռայլ գույներով է ներկայացնում XVII դարի անգլիացի փիլիսոփա Թ. Հոբսը. «մարդը մարդուն՝ գայլ»։ Ավ. Իսահակյանի 1895թ. «Մարտի 19» թվագրության օրագրային գրառումներից մեկում հանդիպում ենք հետևյալ մեջբերմանը. «Ոչ ամեն մարդ կա գազանի մեջ, բայց ամեն գազան կա մարդու մեջ» (Պ. Շայֆլին)²⁷: Դեռևս 16-ամյա պատանի՝ Իսահակյանը օրագրի պատանեկան խանդավառությունը ծրարող տողերում անկեղծ խոստովանում է. «...Ես պետք է սիրեմ մարդկությունը, որ նորա համար բարերար հանդիսանամ, որ նորա առաջ իմ սիրով... բանամ ցանկալի աշխարհի դռները...» (Հ, 198): Կյանքի, մարդու, աշխարհի հանդեպ տիեզերական այս մեծ սիրուց ծնված երազանքները, սակայն, բախվում են մարդկության բարօրության, ազատության և արդարության հաստատմանը խոչընդոտող բիրտ իրականու-

²⁶ Կյանքի իմաստի էության քննությունը արևելյան իմաստասիրական հենքի վրա ներկա է գրողի «Բուդդհան թուշուն» (1925թ.) լեզենդում: Նման հարցեր է ծրարում 1907թ. ավարտած «Շի-Հոանգ-տի Բողդիխանը» (200 տարի Քրիստոսից առաջ) ստեղծագործությունը:

²⁷ Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Ե., 1977, էջ 168: Այսուհետև այս զրբից մեջբերումները էջերը կնշվեն կից:

թյանը, հայ քաղաքական արյունոտ ճակատագրին, և երևույթները ծայրահեղ հուզականորեն ընկալող բանաստեղծի խորհրդածությունները ներկայանում են դառնաթախիժ վշտի ու մորմոքի շերտերով, վերածվում աշխարհի, կյանքի ու մարդու հանդեպ ատելության շանթերի: Իսահակյանի հոգեբանական այս շրջադարձի վկայությունն է առաջին բանտարկությունից հետո կատարված գրառումը. «Ոչ ոք ուչք չի դարձնում ինձ վրա՞թե սա բանտարկեց, տանջվեց... Հիմա ի՞նչ է անում, ինչո՞վ ապրում... Ոչ ոք չի հետաքրքրվում ինձանով... Վա՛յ գոհին...» (Հ, 236): Նույն միտքը առկա է նաև դրան հաջորդող գրառումներում. «Ա՛խ, մարդի՛կ, մարդի՛կ, բյուր. հազար բյուրեր, իմ վառ տենչերս, վառ ցնորքներս... սերս և երգս... հավատս փշրեցիք, խորտակեցիք: ...Եվ բանտ, և կապանք, և ծաղր ու ծանակ իմ բաժինն եղավ դեռ վաղ հասակից. կարոտ մնացի սիրո, գուրգուրանքի և... կյանքս կոշմարի նման ծանր ու սոսկալի անցրի...» (Հ, 260 - 261):

«Աբու-Լալա Մահարիի» ստեղծման շարժառիթը Իսահակյանի կյանքում տեղի ունեցած հոգեկան բարդ փոփոխություններն էին, հիմք՝ նրա կերպափոխության, աշխարհատեսության որոշակի հեղաշրջումներին. հայադրեքնական ընդհարումները, 1905 - 1907թթ. հեղափոխությունը, Ադանայի ջարդը՝ 1909թ., հայ ժողովրդի ծանր սոցիալական կացությունը: Այս ամենին գումարվում են անձնական անհարթությունները՝ կորցրած սեր, երրորդ անգամ ձերբակալման վտանգ՝ Սիբիր աքսորման սպառնալիքով և ստեղծագործական սեփական տաղանդի չգնահատվածության զգացումը: Այս հենքի վրա էլ Իսահակյան մարդու, Իսահակյան քաղաքական գործչի, բանաստեղծի և տղամարդու՝ տարիների հետ կուտակված դառնություններն ու վիշտը միաձուլվեցին ու պատճառ դարձան հրաբխային ժայթքման, որը կարելի է կոչել «Աբու-Լալա Մահարի»:

Շոպենհաուերի մտածողը ոչ միայն փաստում էր կյանքի վիշտն ու տառապանքը, այլև տագնապ ապրում մարդկության վաղվա օրվա համար, քանի որ մարդ արարածի այդօրինակ էությունն ու նկարագիրը համարում էր հավերժական: Մարդկությանը տառապանքից ազատագրելու ուղին կամ, ինչպես ինքն էր գրում, «տառապանքի կախարդական բաժակը չորացնելու» միակ ճանապարհը նա հանգեցնում էր իմացությանը, ինչպես 1814թ. գրած նամակում. «...կյանքի միակ լավ կողմն այն է, որ կամքի կողքին գոյություն ունի նաև իմացությունը, որը և ապահովում է վերջնական ազատագրումը կամքից»²⁸: Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմում հոգևոր աշխարհը մարդու հարստությունը համարող հերոսի՝ խորհրդածությունները ծավալվում են, ի լրումն Շոպենհաուերի, նաև Հին Կտակարանից եկող՝ «միտքը մարդու ցավ ու տառապանքի աղբյուր է» եզրակացությանը: Հայտնի է, որ պեսիմիզմի ճանաչված տեսաբաններից մեկը, մարդ արարածի հոռետեսության պատճառ-ակունքների քննությանն անդրադառնալիս, այն հանգեցնում է կորցրած սիրո կամ սիրած էակի դավաճանություն փաստին³⁰: Հայտ-

²⁸ А. Шопенгауэр. Его жизнь и научная деятельность, СПб., 1891, с. 73.

²⁹ Գրականագետ Ն. Աղբալյանը, անդրադառնալով Լ. Շանթի «Հին աստվածներին», գրում է. «Աշխարհը մտածող մարդուն հասցնում է մեկուսացման» (Ն. Աղբալյան, Գրական-քննադատական երկեր, Բեյրութ, 1959, էջ 73), եզրահանգում, որ նույնը կարելի է ասել նաև «Աբու-Լալա Մահարի» պոեմի վերաբերյալ:

³⁰ Е. Каро, Пессимизм XIX века, Л. Леопарди, Шопенгауэр, Гартман, М., 1883, с. 43, 51.

նի է, որ բանաստեղծ Իսահակյանը վերերկրային զգացմունքներ է տածել Շուշանիկ Մատակյանի Հանդես, իսկ վերջինիս ամուսնովթյունից հետո թղթին է Հանձնել իր Հոգևոր անեզր տառապանքը ընդգրկող տողեր: Տասնամյակներ անց «Ես»-ի Հոգևոր-մարդկային նկարագրի քննության շուրջ մտորումները Իսահակյանը այսպես է ձևակերպում. «Զբավարարաված կյանք, չբավարարված սեր անցյալում, սա է Հիմնական վիշտը և մնայուն, ինչպես ինձ Համար, այնպես էլ ուրիշներին»³¹: «Աբու-Լալա Մահարի» պոեմի երկրորդ սուրահն ամբողջությամբ կնոջ մարդկային, Հոգևոր-բարոյական նկարագրին է նվիրված, այն դեպքում, երբ նման ընդգծված թեմատիկ բաժանում պոեմում այլևս դժվար է գտնել, իսկ կնոջն ուղղված ահեղամոռնչ ու ահասարսուռ մերկացումները ընդհանրապես ծանոթ չեն Համաշխարհային գրականությանը: Գրողի եզրակացությունը հետևյալն է՝ սերը միֆ է: Իսահակյանագիտությունը մեծ բանաստեղծին Համարում է «սիրո երգիչ»: Չմերժելով Հանդերձ այս տեսակետը՝ նշենք, որ պոեմում հեղինակին Հաջողվել է ներկայացնել սիրո բազմաշերտ ու տարաբնույթ ընկալումից, ամեն ինչից Հիասթափված հերոսին՝ Հայրենիք, կին, մայր, կյանք, աշխարհ, ընկեր, բարեկամ, ծանոթ մարդիկ, և նա՝ Աբուն, մենակ է ուղղվում դեպի անապատ:

Դեռևս 90-ական թվականներից Իսահակյանը մեծ հետաքրքրասիրություն է Հանդես բերում ժամանակի երիտասարդության կուլթի՝ Ֆր.Նիցշեի Հանդես: Հայտնի են նրա կատարած չափածո թարգմանությունները, Նիցշեյան ներշնչմամբ գրված «Փշե պսակ ճակատիս կըդնեմ» «Ecce Homo» բանաստեղծությունները, նրա փիլիսոփայական Հայացքների վերլուծությունը՝ նվիրված, ուսանողական տարիներին գրված անտիպ շարադրությունը՝ «Նիցշեի փիլիսոփայությունը սա որոշում է...» տողով սկսվող: Բանաստեղծը իր «Բաղբեր վայրի թրուսն չըվարած» չափածոյի Համար բնաբան է ընտրում Նիցշեյան «Մի գնա մարդկանց մոտ-գնա անապատ գազանների մոտ» տողը, նպատակադրվում թարգմանել «Այսպես խոսեց Զրադաշտը» երկը (VI, 21): Նիցշեն երգում էր գեղեցիկ ու վսեմ Հավիտենական կյանքը, իսկ նրա իդեալը Հավերժական արժեքներ կրող, մարդկությանը մի նոր աշխարհ առաջնորդող գերմարդն էր: Նրա՝ մարտաշունչ պայքարի ու հերոսության կոչող կարգախոսներով մտքերն ուղղված էին ըմբոստ ու խիզախ երիտասարդ հոգիներին: Նիցշեի խորհրդածությունների առանցքը մարդու գոյություն իմաստի որոնումներն էին, և նա, անարդարությունը համարելով կեղծ արժեքների տիրապետություն հետևանք, իր գրիչը նվիրում է ժամանակի ցածր արժեքներով ապրող «ընկած» մարդկության բարձրացման համար ուղիների որոնումներին: Ուշագրավ են մարդ հակի էություն նրա հետախուզումներն ու եզրակացությունները. «...մարդը բազմակերպար, ստախոս, արհեստական... կենդանի է, մյուս գազանների համար ոչ այնքան վտանգավոր իր ուժով, որքան՝ խելքով ու խորամանկությամբ... նրա ողջ բարոյականությունը շարունակվող անպատկառ կեղծարարություն է...»³²: Մարդ արարածի էության մասին նման կողմնորոշումները նորություն չէին Համաշխարհային իմաստասիրական կյանքում, սակայն Ավ.Իսահակյանի խորհրդածություններում դրանք ներկայանում են Շուպենհայուերի, Նիցշեի

³¹ Բանբեր Հայաստանի արխիվների, 1975, № 3, էջ 50:

³² Фр. Ницше, По ту сторону добра и зла. К генеалогии морали. Прелюдия к философии будущего, Минск, 1992, с. 194.

ազդեցությունը: Վերջինիս համոզմամբ, մարդը մի «անկատար բան» է, որին հարկ է հաղթահարել, և այս տեսակետն է Նիցշեն պաշտպանում իր վերջին տարիներին գրած «Այսպես խոսեց Զրադաշտը», «Չարից ու բարուց այն կողմ», «Բարոյականության ծագումնաբանությունը», «Նեոլ», ուր ըմբռստանում է հասարակական կյանքում իշխող բարու և չարի ավանդական պատկերացումների դեմ: Գերմանացի մտածողը, մարդկությանը տանջանքից ազատելու մտահոգությամբ, մերժում է կյանքում իշխող սուտն ու կեղծ բարեպաշտությունը՝ դրանք համարելով քրիստոնեական գաղափարախոսության հիմքով ստեղծած անցյալի ժառանգություն³³։ «...Կա իրական թշնամիների և վնասակարների միայն մի տեսակ. դա այդ իդեալի խեղկատակներն են, որոնք կասկածանք են առաջացնում. դրանք քրիստոնեական բարոյական իդեալի ծաղրածուներն են և հարկ է, որ օգը մի քիչ մաքրվի...»³⁴։ Նիցշեի կարծիքով, քրիստոնեության համընդհանուր սիրո պահանջը կեղծ է. մարդը ի գործը չէ այլասիրության նմանօրինակ զգացումի, և այս հանգամանքն էլ նրան մղում է կեղծ բարեպաշտության: Թվում է՝ քրիստոնեության քննադատության հետքեր են ներկա և Իսահակյանի պոեմում: Քրիստոնեական կրոնում սուրբ թիվ համարվող յոթ սուրահով ծավալվող պոեմում (ավարտը ոչ թե ութերորդ է, այլ՝ «Վերջին սուրահ») կրոնի երեսանց, կեղծ բարեպաշտության քննադատությունը³⁵ ներկայանում է Սուրբ Գրքի լեզվաոճական հարազատությամբ՝ «սրբերի լուսապսակ», «երկնային... շղարշ», «հոգու դժոխք», «հոգու կեղծիք», «համբույրն ընկերի» (Հուդայի)։

Բայց ամենից շատ ատում եմ հազար ու մեկերորդը -
կեղծիքը հոգու,

Որ զարդարում է անմեղ սրբերի լուսապսակով
երեսը մարդու:

Մարդկային լեզու, դու որ երկնային բույրով ու
թուլրով, շղարշով պայծառ

Ծածկում ես մարդու դժոխքը հոգու, ոգե՞լ ես
արդյոք ճշմարիտ մի բառ (II, 55):

...Բյուր կեղծիք ունի իր ակունքի մեջ

համբույրը մարդկանց, համբույրն ընկերի... (II, 65):

Իսահակյանական այս ընդհանրացումները, թվում է՝ նարեկացիական ազդվածությամբ էլ են ներկայանում: Միջնադարյան հանճարի աղոթքն առ Աստված իր մեջ է առնում սիրո բազմաբնույթ դրսևորումները և առօրյա կյանքում դրանք չգտնելով՝ հայացքն ուղղում դեպի երկինք: Այս հանգամանքը նկատի առնելով էլ, թերևս, նպատակահարմար է պոեմի այս պահը մեկնաբանել ոչ միայն Նիցշեի, այլև աղբյուրներ փնտրել նարեկացու աշխարհընկալման հետ, որն էր ձոն առ կյանք³⁶։

³³ Այս մասին մանրամասն տե՛ս Д. Мионов, Нравственная автономия по Канту и Ницше, СПб., 1905, А. Ф у л л ь е, Ницше и имморализм, СПб., 1905.

³⁴ Ф р. Н и ц ш е, նշվ. աշխ., էջ 33.

³⁵ Կրոնների (մոլանսականություն, քրիստոնեություն, մուսուլմանություն) ձաղկող քննադատությունն է ներկա նաև արաբ բանաստեղծի՝ Ալ Մահարու չափածոյում: Իր խորհրդածությունները նա ավարտում է նմանօրինակ եզրահանգմամբ. «Ամենազոր ո՛վ իմ Աստված, մարդկությունը միթե այսպես Պիտ՝ մոլորի ճշմարտության սուրբ խորանեն բարձր ու վեհ...» (Մ. Վարժապետյան, նշվ. աշխ., էջ 70):

³⁶ Այս հարցի մասին հարկ է գրել առավել ծավալուն, գիտականորեն հիմնավորված ուսումնասիրություն:

Թվում է՝ քրիստոնեական կրոնի անձնագոհության գաղափարախոսությունը քննադատությունն է առկա պոեմի հետևյալ տողերում.

Ձոհվում է լավը վատերի համար, և վատն ու չարը

լկում են, տանջում...

...և կյանքի արտում որումն է աճում (II, 70, 71):

Պոեմում հեղինակը քննադատում է ոչ միայն քրիստոնեությունը, այլև կրոններն ընդհանրապես, որոնք «չղթա են կռում և ստրկության կոփում գնդաններ» (II, 71):

Նիցչեն քրիստոնեական գաղափարախոսությունը համարում է «մեծ անեծք»³⁷, որը կաղապարում է մարդկային մտածողությունը, սահմանափակում նրա գործողությունների ազատությունը: Քրիստոնեական գաղափարախոսությամբ սրբագործված բարոյական օրենքները բռնանում են մարդ էակի ազատության վրա, իսկ արդարությունն արդեն թույլերի կամքի ենթարկումն է բնությունից ուժեղներին: Նիցչեն առաջադրում էր նոր գաղափարախոսություն: Խորհելով ժամանակի իշխող բարոյական օրենքների շուրջ՝ նա գրում է. «...Արդյոք բարոյականությունը վտանգավոր չէ՞, արդյոք այն ամենավտանգավորը չէ՞ եղած բոլոր վտանգավորներից...»³⁸: Անդրադառնալով Նիցչեի՝ բարոյականության մասին դատողություններին՝ արդի ռուս փիլիսոփան հավաստում է, որ նրա «...բարոյականությունը միանգամայն օրինաչափորեն իր մեջ էր ներառում արդարության, այլասիրության և մերձավորի սիրո, կարեկցության զգացումի, նյութական արժեքների հանդեպ հոգևոր գերազանցության գիտակցություն, անհատականից հասարակականի բարօրության գերադասություն և այլն»³⁹: Նիցչեին հատկապես զայրացնում էր քրիստոնեության քարոզած հավասարության գաղափարը, բնությունը մարդկանց հավասար չի ստեղծել և նույնատեսակ ձիրքով, արտաքին բարեմասնություններով օժտել: Այս միակերպությունն արդեն իսկ անկում է նշանակում: Մարդը բնությունից ազատ է, մինչդեռ բարոյական օրենքները, քրիստոնեական գաղափարախոսությամբ սրբագործված, բռնադատում են նրա ազատությունը: Նիցչեի իդեալը անհատականությունն է. «Առավել մեծ է նա, ով կարող է լինել ամենամիայնակը, ամենալուսկյացը, ամենածածուկը, ամենախուսափողը՝ բարուց և չարից անդին, իր առաքինությունների տերը՝ կամքի հարստության իր չափով, ահա թե ինչը պետք է մեծություն համարվի»⁴⁰: «Աբու-Լալա Մահարի» պոեմը մարդ էակի անհատականությունը գովերգող և հասարակական էգոիզմը և նախահարձակումը դատապարտող ստեղծագործություն է.

Մենակությունն է իմ սերը հիմա, երկինքն աստղաբիր՝

վրանս հայրական

Եվ քարավանն է ընկերս հիմա և իմ հանգիստը՝

ուղիս անկայուն... (II, 65):

Նիցչեի հերոսի օրինակով Աբուն և գերադասում է անհայտ ու խորհրդավոր ճանապարհները, վայրի գազանների ընկերակցությունը գերադասում մարդկանցից և իր երազանքների հանգրվան մեկնում մենակ: Լմբոստ ու խիզախ հոգու տեր ազատ ու ինքնիշխան անհատը մերժում է

³⁷ Фр. Ницше, Антихрист, СПб., 1907, с. 60.

³⁸ Фр. Ницше, По ту сторону добра и зла..., с. 206.

³⁹ Նույն տեղում (Ն.Ռոժինի առաջաբանը), էջ 7:

⁴⁰ Նույն տեղում, էջ 126.

ժամանակի Հասարակության բարոյականությունը, պահանջում ցածր արժեքների վերարժեքավորում և մեկնում անապատ՝ ճշմարտություն և արդարություն որոնելու.

Տար ինձ, իմ սիրտը՝ Հավիտյան լացող, այնտեղ.

ուր բնավ չեն եղել մարդիկ... (II, 65):

Նիցշեի Հետևությունը պոեմում ներկա է Իսահակյանի Հերոսի մերժող, ժխտող վերաբերմունքը ամբոխի Հանդեպ: Գերմանացի մտածողը վերջինիս անվանում էր՝ «նախիր», «անսահման շատերը», «շատ շատերը», «կյանքը թունավորող աղբյուր», «երկարականջների այդ բազմությունը», որի դերը կյանքում այն է, որ պղտորի այն ամենը, ինչ մաքուր է ու ջինջ, իջեցնի մեծն ու վեհը՝ «երկար ականջներին» մատչելի դարձնելու համար: Ահա և ամբոխի իսահակյանական բնութագիրը.

Ի՞նչ է ամբոխը - մեծ Հիմար է նա,

ոգին Հալածող և տարրը Հարի,

Բռնության խարիսխ, և սուր երկսայրի,

և զայրույթի մեջ գազան վիթխարի... (II, 67):

Հայտնի է Նիցշեի արհամարհանքը հատկապես Համայնքի Հանդեպ: Անհատականություն դավանող և Համայնք ժխտող նրա ցասկոտ ու կրքոտ, անդիլում մերժումները առկա են և Հայ գրողի պոեմում.

Նողկալի Համայնք, Հեղձուցիչ օղակ, քո լավն ու

վատը - ահեղ խարազան

Մի անհուն մկրատ բոլորին խուզող՝ միահավասար

և միանման (II, 67):

Նիցշեն հատկապես ատում էր Համայնատիրության գաղափարը, որը քարոզում էր «...Հոգիների Հավասարություն»⁴¹: Այս ելակետով ընդվզում է ժամանակի իշխող պետական սարք ու կարգի դեմ՝ վեհի ձգտման խոյանքներում նպատակադրվում վերափոխել կյանքը: Նա շատ «ցածր», «ընկած» մարդկության բարձրացման համար ուղիներ էր որոնում, քանի որ գերմարդու ժառանգները ավելի բարձր կլինեն, քան ժամանակի «ընկած մարդկության» սերունդները. «Պետություն է կոչվում բոլոր սառն ճիվաղներից ամենասառը: Սառնասիրտ է նաև ստում նա... «Նա՝ պետությունս, հմ ժողովուրդը»⁴², «Պետությունը սակայն ստում է բարիի ու Հարի բոլոր լեզուներով... ու ինչ որ ունի՝ գողացել է նա»⁴³: «Պետություն հմ անվանում ես այն, ուր բոլորը թույն խմողներ են - լավերը, թե վատերը: Պետություն, ուր դանդաղ ինքնասպանությունը բոլորի - «կյանք» է կոչվում»⁴⁴:

Նիցշեի օրինակով Իսահակյանը ևս ծառանում է պետության օրենքների դեմ, քանի որ դրանք կաղապարում են մարդու սոցիալական գոյավիճակը. «...օրենքներն են կամքիս իշխում, հսկում են իմ մտքերի վրա...» (Հ, 294): «Արու-Լալա Մահարի» պոեմում արդեն Իսահակյանի Հերոսը նզովքի շանթեր է ուղղում պետության, իշխանավորների ու օրենքների Հասցեին⁴⁵.

⁴¹ Ф р. Н и ц ш е, Антихрист, с. 95.

⁴² Ֆր. Նիցշե, Այսպես խոսեց Զրադաշտը, Ե., 1990, էջ 63:

⁴³ Նույն տեղում, էջ 64:

⁴⁴ Նույն տեղում, էջ 65:

⁴⁵ Պետության սահմանած օրենքների դեմ առաջին ծառացումները ներկա են դեռևս մտածող Անտիփոնեսի «Ճշմարտության մասին» գրքում: Նրա կարծիքով, պետությունը «չղթայում է մարդուն» և օրենքի ուժով ստիպում «...Հարկադրաբար ենթարկվելու նրա

Ի՞նչ է օրենքը, – մարդկանցից օրհնած, բիրտ ուժեղների
այդ սուրը դաժան,
Անգորի գլխին կախված հավիտյան, խեղճին խողխողող,
Հզորին պաշտպան:
... Եվ ամեն ինչ է իշխանությունը – իրավունք, օրենք
և արդարություն:
Նա ինքն է խիղճը և չարն ու բարին, իսկ դու գերեզման,
դու՝ ոչնչություն:
Ես նզովում եմ իշխանությունը՝ հաղարածիրան
մոլի բորենին,
Իր ամեն քայլը՝ արյունի հնձան, որ տրորում է
ծերին, մանուկին (II, 68 – 69):

Ազատության գաղափարը մարդու գոյության ամենաառաջնահերթ նախապայմանը համարող Խասազականը կյանք տեսած ու տառապած մարդու գիտակցությամբ իրավունք է վերապահում իրեն ամբողջացնելու պետություն և օրենքի մասին իր եզրահանգումները և նիցչեյան ոճական հարազատությամբ արձագանքում. «Այնտեղ, ուր սեգ վազում է օրենք-պետությունը, այնտեղ կաղում է մարդ-անհատը... ճշմարիտն եմ ասում ձեզ, ի՞մ եղբայրներ...» (Հ, 236):

Նիցչե-Խասազական հոգեհարազատության հիմնարար գաղափարը առաջին հերթին ներկայանում է մարդու ազատության շուրջ խորհրդածություններում. ոչ ոք իրավունք չունի կաշկանդելու մարդ արարածի՝ բնությունից նրան պարգևված ազատ⁴⁶ ու անկախ կամքը, և բնությունից ազատ ծնված անհատը պետք է պաշտպանի իր բնական իրավունքը: Խասազականը օրագրում՝ «Հիշատակարանում», փխրիստոփա Նիցչեին նույն հարթության վրա է դնում կրոնական տարբեր պաշտամունքի աստվածների հետ. «Բուդդհա, Մովսես, Ջրադաշտ, Քրիստոս, Մահմեդ և Նիցչե...»⁴⁷. Այսօրինակ զուգահեռը, թվում է, հետևյալ պատճառն ունի. հավանաբար հզոր անհատի շուրջ խորհրդածություններում գերմանացի իմաստասերին է Խասազականը դիմում՝ իրեն հուզող բազմաթիվ պատասխանները որոնելու նպատակով: Նիցչեի գերմարդու գաղափարներով, սակայն ոչ այն որակով, որ գերմանացի փխրիստոփան էր պատկերացնում, այլ իր՝ Խասազականական մեկնությամբ է կերտված ազգային հերոսը: Գերմարդու կերպարով Խասազականը ինքն իրեն էր ներկայացնում. «Սոս-հերոս Մանթաշեցի» – ահա՛ իմ հերոսի, իմ անունը» (Հ, 144): Ի լրումն գերմանացի մտածողների գաղափարական հերոսների (Ա.Շոպենհաուեր, Ֆր.Նիցչե)՝ Խասազականի ազգային հերոսը XIX դարավերջի և XX դարասկզբի հայ ազգային

օրենքներին», (С. Лурье, Предтечи анархизма в древнем мире, М., 1962, с. 105).

⁴⁶ Նիցչեն հավասարության նշան է դնում ազատության և ուժի միջև, որը, սակայն, ընդհանուր ոչինչ չունի բարոյականության հետ:

⁴⁷ Ուշագրավ է, որ իր նամակներից մեկում Քրիստոս-Նիցչե զուգահեռով է ծավալում իր մտորումները Հովհ. Թումանյանը՝ իդեալական մարդ արարածի մասին խորհրդածություններում. «Գերմարդն ստեղծելու ձգտումն եմ ասում, ինչպես ասում է Նիցչեն, կամ ինչպես Քրիստոսն է հորդորում, Աստծո նման կատարյալ լինելու ձգտումը» (Հովհ. Թումանյան, Երկերի լրակատար ժողովածու, 10 հատորով, հ. 9, Ե., 1997, էջ 229): Վերնատան անդամներից յուրաքանչյուրը կրում էր համաշխարհային հոգևոր մշակութային գործիչներից մեկի անունը. Խասազականը՝ Ֆր.Նիցչեի:

մտածողությունը հայ է նաև⁴⁸։ Իսահակյանի Աբուն գերմարդ է։ Ի տարբերություն Նիցչեի՝ նա նոր որակի մարդ է՝ գիտուն, կրթված, ճանաչողության որոշակի ճանապարհ անցած, որն իմաստավորեց մարդուն, կյանքը, և հարի ու բարու պայքարում խաբված՝ մեկնեց անապատ։ Իսահակյանի փիլիսոփայության հենքը մարդն է, որին նա դիտարկում է ամենամեծ կարևորությունը՝ սիրո արժեքով, իսկ գերմարդը արհամարհում է ամեն ինչ, չի նկատում շրջապատը։ Իսահակյանը մարդու և երգիչ է, ո՛չ գերմարդու։

Ազատության գաղափարը եղել է Իսահակյանի գիտակցական ողջ կյանքի գոյություն իմաստը, ներքին այրման հավերժական շարժիչը՝ ազատ սեր, ազատագրված մարդ և հայրենիք։ Եթե Շուպենհաուերը ազատության գաղափարն առնչում էր մարդու ինքնագիտակցության ու ինքնահաստատման գործընթացին և կարծում, որ մարդիկ հաճախ ստրուկ են դառնում ուրիշների կարծիքներին, ապա Ֆր.Նիցչեն և Ս.Կիերկեգորը, շարունակելով զարգացնել այդ տեսությունը, եզրակացնում են, որ ազատությունը շնորհված է եզակի անհատներին, և այն չի կարող դառնալ ամեն մեկի սեփականությունը։ յուրաքանչյուր արարած չէ, որ կարող է ընթանալ նոր ճանապարհով՝ իր հետևից տանելով հազարավորներին։ Իսահակյանը ազատությունը համարում է հավերժական արժեք, առանց որի չկա մարդկություն, չկան ազգեր։

...Կյանքի արև՝ ազատություն...

...Աշխարհի տե՛ր ազատություն...

...Դո՛ւ, կյանքից վե՛ր, դու, լույս-արև,

Ազատություն՝ և, ազատություն...⁴⁹։

«Աբու-Լալա Մահարի» պոեմի վերջին երեք սուրահները հիմնօրհներգություն են արևին, և երկրի քաղաքական կյանքում արդարության ծարավի հայ ժողովրդի զավակին առաջնահերթ հուզող հարցը արևի՝ իբրև աշխարհին ազատություն պարգևող գործության գաղափարի ընկալումն էր։

Եվ ոսկեվառ վսեմ արևը՝ ազատությունը աշխարհասփյուռ։

Հազար ու հազար հրաշալիքներով և հրաբորբոք հրապույրներով

Շեմ-արևն ելավ չքեղ, լուսավառ,

վարդի, սնդուսի բյուր պարույրներով (II, 75)։

Արևելքի բոլոր ժողովուրդները պաշտում էին իրենց ընկալած արևը, և բանահյուսության նրբին գիտակ Իսահակյանը, որ քաջածանոթ էր ոչ միայն ազգային, այլև Հին արևելքի բանահյուսությանը և փիլիսոփայությանը, տարանջատում է հայկական արևը արաբականից։ Պոեմում ուշադրավ է հետևյալ իրողությունը. միջավայրը, ուր ծավալվում են գործողությունները, սյուժեն, բնաշխարհը արաբական են, ուստի հեղինակը անհրաժեշտարար ուրվագծում է համապատասխան բնանկար՝ անապատ, ուղտերի քարավան։ Արևապաշտությունը հեթանոս հավատալիքներով է պայմանավորված, և ասվածը հաստատելու համար դիմենք Արևելքի մեծ բանաստեղծներից մեկի՝ Ֆիրդուսու Շահնամին՝ քաղելով արևին վերաբերող պատկերները. «Հրաբորբոք քամին սուլեց», «Իսկ երկնքից արեգակը հուր է թափում

⁴⁸ Այս մասին մանրամասն տե՛ս Մ.Զաքարյան, Ավ.Իսահակյանի «Հիշատակարանը», Ե., 1999, էջ 58 - 90։

⁴⁹ Նույն տեղում։

ամենուր», «Երբ հրաբորբ արեգակը իջավ դեպի մայրամուտ», «Նա է մարում արեգակի բորբ շողերը երկնքում»⁵⁰:

«Աբու-Լալա Մահարի» պոեմի անապատի նկարագիրը մանրակրկիտ և ճշգրտորեն վրձնել է Մ. Սարյանը: Այդ նկարները տեղ են գտել «Սարյանը Ավ. Իսահակյանին» ալբոմում (Ե., 1975): Նշված պատկերների առաջին պլանում արշավող ուղտն է՝ վրան Աբու-Մահարին, երկրորդ պլանում ուղտեր են, այն քարավանը, որին Աբուն է առաջնորդում: Անապատի հողմից շիկացած ավազը բարձրացել է երկինք, և նկարիչն ստեղծել է մրդկահողմի տպավորություն. արևի բորբ ճառագայթները և կարմրած ավազը ձուլվել են միմյանց: Թերևս միայն սարյանական վրձնի վարպետությունը կարող էր պատկերել անապատի անկրկնելի գեղեցկությունը՝ հոգեհարազատ Իսահակյանի պոեմի արծարծումներին.

Եվ ուղտերն, իբրև ոսկի մակույկներ, հուր
ալիքները ծով-անապատում.
Ճեղքելով արագ սլանում էին դեպի բոցավառ,
լուսավառ հեռուն (II, 77):

Պոեմում Աբու ձոն է մարդկությունը, ներքող կյանքին և բազում իմաստասիրությունների, մշակույթի հենքի վրա ձևավորված հերոսը՝ Աբուն, պատգամում է մարդկությանը համամարդկային արժեքներ՝ ճանաչել իմաստություն և արարում:

Տարիների հետ Իսահակյանի ստեղծագործական կյանքում տեղի է ունենում կարծիքների, գնահատումների վերաբեքավորում (այնպիսի արժեքներ, որոնք Իսահակյանը համարել է իր կյանքի իմաստը): Հոգեբանական այս վերածնունդով էլ պայմանավորված է հետևյալ գրառումը օրագրում. «Անեծք այն մարդկանց, որոնք պեսիմիզմ, սկեպտիցիզմ մետաֆիզիկա են քարոզում... Մարդկությունը, թեև նա թշվառ է, անբախտ, ...բայց նա է բնություն, տիեզերքի փառքը, միտքը, հոգին, լեզուն, սիրտը...» (Հ, 267 - 268): Նման իմաստավորմամբ էլ ընկալելով կյանքը՝ Իսահակյանը իր համար գոյատևման ամուր հենարաններ է որոնում՝ շարունակելով աշխարհի և մարդկության, նրանց փոխհարաբերությունների ըմբոստ քննությունը:

ТВОРЧЕСКИЕ ИСТОКИ ПОЭМЫ А.В.ИСААКЯНА “АБУ-ЛАЛА МААРИ”

М.Г.ЗАКАРЯН

Р е з ю м е

Впервые в исаакяноведении делается попытка провести параллель между идеями Шопенгауэра-Ницше и А.В.Исаакяна при исследовании его поэмы “Абу-Лала Маари”. Молодому Исаакяну были близки как идеология пессимизма, так и бунтарский, критический дух Ницше.

Представлены также параллели с произведениями известного арабского мыслителя XI века Абу Ала ал Маари.

⁵⁰ Թիր դուսի, Շահնամե, Ե., 1975, էջ 5, 10, 79, 90:

